№ 9 (13)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

9 (13)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №9 (13). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 266 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

НЕОРОМАНТИЧЕСКАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ СИЛЬНОГО ГЕРОЯ В РОМАНАХ ДЖ. ЛОНДОНА «ЛУННАЯ ДОЛИНА» И «МОРСКОЙ ВОЛК»

Гаяне Виуловна Егиазарян
gyeghiazaryan@hotmail.com

Д.ф.н., профессор, зав. кафедрой английского языка,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

Мариам Артуровна Акопян

Соискатель Национальной академии наук Республики Армения,
Институт литературы им. М. Абегяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Творчество Джека Лондона всегда анализировалась с точки зрения эстетических принципов реализма, романтизма и натурализма, но в последнее время, в новейший период современного литературоведения, стала изучаться на основе неоромантической литературы. Таким образом, в статье обсуждается проблема типичного неоромантического героя в сравнительной парадигме романов Дж. Лондона «Лунная долина» и «Морской волк». В основе неразрешенного конфликта нового героя литературы лежит осознание романтического несогласия между идеалом и действительностью, которое толкает «маленького» человека на уникальные шаги, пробуждая неизведанные стороны его личности.

Ключевые слова: сильная личность, исключительный герой, маленький человек, идеал, реальность.

Ուժեղ անհատի նկարագիրը, որն ունեցել է բազմաթիվ ավանդական մեկնաբանություններ, այլ բնույթ է ստանում նեոռոմանտիկ գրականության տեսանկյունից: Այն մի կողմից շարունակում է կրել ռոմանտիկ հերոսին բնորոշ գծերը, մյուս կողմից՝ դուրս գալիս «ուժեղ հերոսի» կարծրատիպային պատկերացումներից՝ դառնալով ավելի բարդ ու հակասական կերպար: Նեոռոմանտիկ հերոսն ուժեղ է, բայց ոչ թե ռոմանտիկին հատուկ տիտանական հատկություններով: Նրա ուժի ընկալումը ստանում է նոր բնույթ. ճիշտ է, նա առանձնանում է իր ինքնատիպությամբ, պայքարում է դժվարությունների դեմ, չի հանձնվում, բայց դիտվում է ոչ թե որպես ամենակարող, այլ՝ դժբախտ ճակատագրի ծանրության տակ չկոտրվող մարդ. ահա թե ինչու նեոռոմանտիկ գրականության բացառիկ հերոս է դառնում հասարակ, *փոքր* մարդը: Այս մարդիկ «մոտ են ժողովրդին և միաժամանակ հեռու նրանից, վիրավորված և միաժամանակ մյուսներին վիրավորող … մարդիկ, որոնք վանում են իրենց հակասոցիալական բնազդներով, բայց … դառնում հասարակության բողոքի մարմնացում» [3: 609–610]: Ըստ էության, *փոքր մարդու* ուժը դրսևորվում է միայն որոշակի «շրջանակում», որից դուրս նրա *վեհությունն* իսպառ անհետանում է, և մնում է իրատեսական, հասարակ մարդը՝ իր թուլություններով, արտաքին աշխարհին, սոցիալական միջավայրին, ճակատագրին հակադրվելու վերջին ճիգերով և աշխարհը փոխելու ներքին մղումով:

Լոնդոնի հերոսների գերնպատակը իրականությանը շատ մոտ երազանքի նյութականացումն է, որը արտաքին քայքայիչ ազդեցության ներգործության հետևանքով կարող է հանգեցնել անկման: Նրանց աշխարհայացքի հիմքում աշխարհի հանդեպ իդեալական պատկերացումների և բուն իրականության միջև առկա սուր հակասությունն է, որից էլ բխում է *երկակիությունը* ՝հիմնված իդեալի և կյանքի միջև դրամատիկ և նույնիսկ ողբերգական անհամապատասխանության հայեցակարգի վրա: Սակայն, եթե ռոմանտիզմում իդեալը մշտապես «հեռանում» է աշխարհից՝ մնալով հավերժ անհասանելի, ապա նեոռոմանտիկ գրականության մեջ այն, ընդ-

հակառակը, մոտենում է հերոսին, դառնում հնարավոր և իրական: Նեոռոմանտիկները, գիտակցելով իրականության ռեալիստական արտացոլման առաջատար դերը, իրենց իդեալը փնտրում էին առօրյա կյանքում՝ սիրո, ընկերության, հերոսության, հավատարմության մեջ: Ըստ այդմ՝ ի տարբերություն 19-րդ դարասկզբի ռոմանտիկ գրականության ավանդական հերոսների՝ *նոր հերոսը կենսականորեն իրական է* [5: 309–310]:

Անձի լոնդոնյան հայեցակարգի հիմքում ընկած է երկու աշխարհների միջև հակասությունը, որտեղ հերոսն ապրում է և որտեղ ձգտում է ապրել: Իհարկե, այն աշխարհը, որին հերոսը ձգտում է, այնքան էլ այլ հարթության վրա չէ, ինչպես լինում է գիտաֆանտաստիկ գրքերում. այն իրականությունից դուրս՝ երևակայական աշխարհ չէ: Սա պարզապես երևակայական կյանքի նյութականացումն է, որը մարմնավորում է հերոսի հոգևոր որոնումները, որոնց իրականացման համար կարևոր չէ գտնվելու վայրը:

«Լուսնի հովիտ» («The Valley of the Moon», 1913) վեպում հերոսների երազած աշխարհն այնքան մոտ էր իրականությանը. նրանց երջանիկ ձգտումները գրեթե կատարված էին. աշխատանք, տուն, ընտանեկան ջերմ մթնոլորտ, երեխա: Սակայն սիրող զույգին չի հաջողվում պահպանել թվարկածներից գեթ մեկը: Նրանց բոլոր ջանքերն ի չիք են դառնում, քանի որ իրականությունը սպառնում է խլել նրանցից այն «համեստ» երջանկությունը, որն ամուսինները վաստակել ու պահում էին վերջին ճիգերով: Այսպես, նրանք կանգնում են ընտրության առաջ. կա՛մ հանձնվել ու դառնալ սոցիալական ճգնաժամի զոհը, կա՛մ փրկվել՝ հեռանալով «այդ իրականությունից»:

Վեպում Բիլլի Ռոբերտսը նկարագրվում է որպես եզակի անհատականություն, մինչդեռ իրականում նա հասարակ մարդ է: Այնուամենայնիվ, Բիլլին, ի պատասխան տվյալ ժամանակի հասարակության, մարդկային էության ապամարդկայնացման պայմաններին՝ դիտվում է որպես **բացառիկ հերոս**: Այսինքն, հերոսի կյանքն ընթանում է այնպիսի հանգա-

մանքներում, որոնք խթան են դառնում բացահայտելու նրա՝ բացառիկությանը միտված հատկությունները, որոնք գուցե և երբևէ չդրսևորվեին այլ պայմաններում: Եվ կենտրոնանալով իրադարձությունների վրա, որոնք նույնքան բացառիկ են, որքան ինքը՝ Բիլլին, ընթերցողն ակամա «մոտենում է» կերպարին՝ իրեն պատկերացնելով այն իրականության մեջ, որը բոլորովին էլ հորինված չէ, այլ շարունակում է տարաբնույթ դրսևորումներով գոյություն ունենալ առ այսօր:

Բիլլին նկարագրվում է որպես ֆիզիկապես և կամային հատկանիշներով ուժեղ անհատականություն, որը ճիշտ է օգտագործում իր կարողությունները: Նա նրբանկատ է, ունի հանդարտ բնավորություն, տիրապետում է պաշտպանվելու, կշռադատելու, պահը որսալու և գնահատելու արվեստին: Նրան վեպում հակադրվում է Չարլի Լոնգի կերպարը, որը նույնպես ուժեղ է, բայց կոպիտ ու անշնորհք, նրա գործողությունները միանգամայն բնազդի վրա են հիմնված: Նա հիշեցնում է «Ծովագայլը» վեպի գլխավոր հերոս Գայլ Լարսենին, որն իր ուժը գործի է դնում բացասական, հակահումանիստական գործողություններ իրականացնելու մեջ: Մինչդեռ Չարլին, նույն գայլային բնազդով է շարժվում, պարզապես նրանում բացակայում է ներքին ուժը, կշռադատելու, խորհրդածելու կարողությունը: Առաջին հայացքից նա Բիլլիից ավելի ուժեղ է թվում, սակայն չի կարողանում ճիշտ դրսևորել իրեն. Բիլլին ասում է. «…կարևոր է ոչ թե ուժը, այլ այդ ուժի բնույթը և այն, թե ով է կանգնած այդ ուժի հետևում» [1: 68]: Չարլին արտաքուստ կենդանական կերպարանք ունի՝ ահռելի ձեռքեր, անտակտ, անկանոն պահվածք: Եթե Բիլլի Ռոբերտսի և Գայլ Լարսենի արտաքին զորեղությունը դիտվում է որպես գեղեցկություն ու գրավչություն, ապա Չարլի Լոնգի «խոշորությունը» ոչնչով չի գրավում: Ի վերջո Բիլլին միակն է, որի գործողությունները սեփական բարոյական հումանիստական արժեքների արտացոլանքն են:

Նշված հերոսների ուժը նրանց ժամանակավոր փրկությունն է: Աստիճանաբար այն դառնում է թափանցիկ քող, որը ծածկում է ներքին

վախերն ու ապրումները: Ուժն է ծնում իրավունք, նոր հնարավորություններ, հիանալի կարգավիճակ, իշխանություն, բայց կորցնելով դիմադրողականությունը և նահանջելով արտաքին աշխարհի հարվածների դեմ՝ սկսում տեղի տալ ներքին թուլությանը: Եվ երբ մարդն այլևս անկարող է կրել «ամենազորի դիմակը», նրա անկումը դառնում է անխուսափելի: Սա գրեթե նույն ռոմանտիկի անկումն է: Եվ հենց անկման պահին մարդու «փոքրությունն» էլ ավելի ընդգծված ու տեսանելի բնույթ է ստանում: «Լուսնի հովիտ» վեպի հերոսը սիրելիի հետ առաջին հանդիպմանը գնում է սպիտակ նժույգով: Հեղինակը պատկերում է «սպիտակ ձիով ասպետի» տեսարանը, որտեղ *հասարակ մարդիկ* կրում են «արքայազնի» և «արքայադստեր» թվացյալ դերերը: Այնինչ, իրականում նրանք բանվորական դասակարգի մարդիկ են, ովքեր չունեն ոչինչ՝ բացի փոխադարձ վեհ զգացմունքներից: Եվ այս տեսանելի իրականությանը մենք բախվում ենք միայն այն պահին, երբ նրանց երազանքների փուլ առ փուլ իրականացումը, որն ուր որ է՝ կհասնի լիարժեքության, փլուզվում է՝ հիշեցնելով նրանց ճշմարիտ դերերը՝ պատռելով երևակայական թափանցիկ ծածկոցը և նետելով նրանց երեսին իրականության աղոտ պատկերը: Ահա այստեղ է, որ «արքայազնը»՝ հոգատար, սիրող ամուսինը, որը բռնցքամարտում ունեցել է փայլուն մասնագիտական ձեռքբերումներ, «վերածվում» ձեռքերը կոշտուկներով պատված կառապանի, ավելին՝ սոցիալական ճգնաժամի ծանրության տակ կքած, ներքին պոռթկումներին տեղի տված հանցագործի, որը գտնվում է սեփական ձգտումների և իրականության անլուծելի հակամարտության մեջ, և նրա՝ «ֆրանսուհու կեցվածքով օրինակելի կինը», գիշերները թաքուն գնում է ծովափից ոստրեներ հավաքելու, որ սովամահ չլինի … իսկ ոչ շատ հեռավոր անցյալում արևի լույսի ներքո պսպղում են սպիտակ նժույգների բաշերը՝ վերածված հասարակ ձիերի:

Հերոսի բացառիկությունն այլ դրսևորում է ստանում «Ծովագայլը» («The Sea-Wolf», 1904) վեպում, նավապետ Լարսենի կերպարում՝ կոպիտ ու դաժան մարդատյաց, որն անխղճորեն պատուհասում է իրենից թույլե-

րին, դիմում բռնության ու չարչարում: Նավապետը տառապում է վտանգավոր գործողություններից հաճույք ստանալու մոլուցքով: Ի տարբերություն ռոմանտիկ հերոսի, որը խորհրդածող է, մռայլ ու պասիվ, Լարսենն ուժեղ է, ակտիվ, գործող ու նվաճող: Եթե ռոմանտիկ հերոսը սիրված չէ հասարակության կողմից, պատճառն այն է, որ նա անհաջողակ է, հաճախ հակադրվում է արտաքին աշխարհին: Մինչդեռ Լարսենը սիրված չէ, որովհետև նրանից վախենում են, և նա հարկադրանքով վերցնում է այն ամենը, ինչ ցանկանում է: Կարող ենք ասել, որ նեոռոմանտիկն իր գերադրական աստիճանում՝ ծայրահեղ դրսևորման մեջ, մարդ-գազանն է [9: 153], որն ընդունակ է իր ոտքերի տակ գցել ողջ աշխարհը: Սակայն առաջին հայացքից այս անպարտելի էակն ունի նաև թերություն, խոցելի մաս, որի բացահայտումը վկայում է, որ անհաղթահարելիությունն իրականում թվացյալ, արտաքին մակարդակն է, քանի որ նրա բացառիկությունը գոյություն ունի այնքան ժամանակ, որքան նրան թույլ կտան հանգամանքները: Լարսենի հակամարտությունը իրականության և *ավելի լավ* իրականության միջև է: Եվ նա փորձում է փոխել իրեն շրջապատող աշխարհը՝ դարձնելով այն ավելի լավը *իր* համար: Բայց դա այն աշխարհը չէ, որի դեմ միայնակ ելնում է Բայրոնի ռոմանտիկ հերոսը և իրեն համարում Աստծուն հավասար: Նեոռոմանատիկ հերոսը դա անում է ավելի նեղ շրջանակում: Այսինքն, նավապետը, որի *նեղ շրջանակը* նավն է, ծովից այն կողմ չունի նույն ազդեցությունը: Սրանում է Լարսենի խոցելիությունը: Ահա թե ինչու նրան հաղթում է իր եղբայրը՝ Մահ Լարսենը, որը, չլինելով նավի անձնակազմից, տրամաբանորեն դուրս է մնում նեղ շրջանակից և նրան ընդունում է ոչ թե որպես *գերմարդ,* այլ սոսկ հասարակ մահկանացու, որը բոլորի նման ունի ներքին թուլություններ:

«Թվում է, թե նա օժտված է մեծ կարողությամբ … ուրեմն ինչու է նա հասարակ մի նավապետ…» [2: 263]: Իհարկե, այստեղ ևս խոսքը գնում է «փոքր» մարդու մասին, որին հանգամանքներն են դարձրել ուժեղ անհատ: «Լուսնի հովիտ» վեպում ևս հերոսների բացառիկությունը դրսևորվում է

միայն իրենց բնակավայրում՝ Օքլենդում, որտեղ Բիլլի Ռոբերտսը «հերոսական» գործողություններ է իրականացնում, չի ձուլվում բազմությանը, փորձում է միայնակ ինչ-որ գլոբալ քայլեր անել: Ու թեև Բիլլին դրական տրամադրվելով աշխարհի և մարդկության նկատմամբ, Լարսենը՝ չարչարելով ու հալածելով, ի վերջո երկուսն էլ չեն կարողանում հաղթահարել: Բայց եթե Լարսենը պարտվում է՝ չցանկանալով դուրս գալ իր սահմանած երևակայական աշխարհի նյութականացումից, որն ընծայել էր իրեն «գերմարդու պատրանքը», բայց որի դատավճիռն անկումն էր, Բիլլին ունի այլընտրանք՝ լքել բնակավայրը. հնարավոր չէ փոխել արտաքին աշխարհի կանոնները, սակայն հնարավոր է փախչել և ապրել «այլ աշխարհում»: Այդպես վարվեց և ինքը՝ Ջեք Լոնդոնը, հեռանալով քաղաքակիրթ աշխարհից դեպի բնություն՝ «լուսնի հովիտ»:

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է Ջ. Լոնդոնի արձակում նեոռոմանտիզմի գեղագիտության ձևավորումը: Այն մի կողմից շարունակում է ռոմանտիկի՝ որպես անհատապաշտի ողբերգական ավանդույթը («Ծովագայլը»), մյուս կողմից՝ արտացոլում XIX դարավերջի և XX դարասկզբի պոզիտիվիստական հայացքները («Լուսնի հովիտ»):

ЛИТЕРАТУРА

1. *Լոնդոն Ջ.* «Լուսնի հովիտ» // Երկերի ժողովածու, Հատ. 11, թարգմանությունը՝ Ա. Բուդաղյանի: – Երևան, «Հայաստան» հրատ., 1965:
2. Լոնդոն Ջ. «Ծովագայլը» // Երկերի ժողովածու, Հատ. 3, թարգմանությունը՝ Հ. Գասպարյանի: – Երևան, «Հայաստան» հրատ., 1972:
3. *Бялый Г.А.* Короленко: [2-е изд., перераб. и доп.] / Г.А. Бялый. – Л.: Худож. лит. Ленингр. отд-ние, 1983. – 350 с.
4. *Луков В.А.* Неоромантизм // Ж-л «Знание. Понимание. Умение», 2012, №2. – М.: МГУ, 2012. – СС. 309–312.
5. *Луков В.А.* История литературы. Зарубежная литература от истоков до наших дней: учебное пособие для студентов высших учебных заведений, обучающихся по специальности «Культурология». – М.: Академия, 2006. – 510, [1] с.

6. *Стоун И.* Моряк в седле: Художественная биография Джека Лондона. – М.: Книга, 1984 [Электронный ресурс]. – Режим доступа: https://royal-lib.com/book/irving_stoun/moryak_v_sedle.html (Дата обращения: 03.03.2022г.).
7. *Фонер Ф.* Джек Лондон – американский бунтарь. – М.: Прогресс, 1955.
8. *Хачатрян Н.* Французская неоромантическая проза: Монография. – Ереван: ГУ им. В. Брюсова, 2017.
9. *Geismar M.* Rebels and Ancestors: The American Novel, 1890–1915. – NY: Hill and Wang January 1, 1963. – 435 p.
10. *Gale C.* A Study Guide for Jack London's «The Sea Wolf», Gale, Study Guides, 2015. – 52 p.
11. *Spiller R.* The Cycle of American Literature. – N.Y., 1955. – 345 p.

ՈՒԺԵՂ ԱՆՀԱՏԻ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ջ. ԼՈՆԴՈՆԻ «ԼՈՒՍՆԻ ՀՈՎԻՏ» ԵՎ «ԾՈՎԱԳԱՅԼԸ» ՎԵՊԵՐՈՒՄ

Գ.Վ. Եղիազարյան
gyeghiazaryan@hotmail.com

Բ.գ.դ., պրոֆեսոր,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի ամբիոնի վարիչ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Մ.Ա. Հակոբյան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայցորդ,
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Ջեք Լոնդոնի ստեղծագործությունը, որը մշտապես դիտարկվել է որպես ռեալիզմի, ռոմանտիզմի և նատուրալիզմի գեղագիտական հայացքների կրող, շարունակող և զարգացնող, գրաքննադատության վերջին շրջանում՝ հե-

տաքրքրության արդիականացմանը զուգահեռ, սկսել է ուսումնասիրվել այլ ուղղությամբ, որն իր մեջ պարունակում է նեոռոմանտիկ գրականությանը բնորոշ առանձնահատկություններ: Արդ, հոդվածում վերլուծության է ենթարկվում նեոռոմանտիկի տիպական հատկություններով օժտված հերոսը Ջ. Լոնդոնի «Լուսնի հովիտ» և «Ծովագայլը» վեպերի համեմատական հարացույցում: Գրականության նոր հերոսի անլուծելի հակամարտության հիմքում իդեալի և իրականության ռոմանտիկ անհամաձայնության գիտակցումն է, որը «փոքր» մարդուն դրդում է բացառիկ քայլերի՝ արթնացնելով նրա էության չդրսևորված կողմերը:

Բանալի բառեր՝ ուժեղ անհատ, բացառիկ հերոս, փոքր մարդ, իդեալ, իրականություն:

NEO-ROMANTIC INTERPRETATION OF A STRONG HERO IN J. LONDON'S NOVELS «THE VALLEY OF THE MOON» AND «THE SEA-WOLF»

G. Yeghiazaryan
gyeghiazaryan@hotmail.com

Doctor of Philological Sciences, Professor,
Head at the Department of English of Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

M. Hakobyan

National Academy of Sciences of the Republic of Armenia,
Postgraduate student at the M. Abeghyan Instituite of Literature,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Jack London's fiction has always been analyzed from the point of view of the aesthetic principles of realism, romanticism and naturalism, and gradually, in the recent period of modern literary criticism, it has been studied on the basis of neo-romantic literature. Thus, the article touches the image of typical neo-romantic hero in the comparative paradigm of London's novels «Moon Valley» and «The Sea-Wolf». The unsolved conflict of the new hero lies upon the realization of romantic disagreement between the ideal world and reality, which incites the «little man» to take some extraordinary steps revealing the hidden features of his inner self.

Keywords: strong personality, exceptional hero, little man, ideality, reality.

Информация о статье:
статья поступила в редакцию 07 марта 2022 г.,
подписана к печати в номер 9 (13) / 2022 – 03.05.2022 г.